**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

22.09.2017թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

Գնահատողներ
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Բացակայում են ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյանը և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետի ՊԺԿ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Է. Համբարձումյանը:

Գնումների համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովինիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1. Մասնակցի՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնացին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին՝ «Ստատուս-Մ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին:
***Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:***

1.2 **22.09.2017թ.** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Ստատուս-Մ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն: Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ չկիրառել, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:*

**Գնահատող (ԳԱՊ)** Վ. Գասպարյան

**Գնահատող** Կ. Պողոսյան

**Գնահատող** Ա. Մաղաքյան

**Գնումների համակարգող՝** Ա. Ամիրյան